**ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ**

*0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771* www.court.am


**N ԴԴ -1 - Ե** 77/3768-24

«20» **սեպտեմբերի 2024թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

**Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 19.09.2024թ. թիվ 02/16.5/32162-2024 և ՀՀ ֆինանսների նախարարի 19.09.2024թ. թիվ 01/8-1/19942-2024 գրությունների**

***Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,***

Հիմք ընդունելով 2024 թվականի սեպտեմբերի 17-ին Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության Վ/123-2024 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 3-րդ կետի 3-րդ ենթակետի 3.1-ին պարբերության «ա» մասը՝ 2025-2027թթ. հաստատված ՄԺԾԾ-ի նկատմամբ 4%-ով նվազեցված պահպանման ծախսերով 2025 թվականի բյուջետային լրամշակված հայտ ներկայացնելու առաջարկության վերաբերյալ, հայտնում եմ հետևյալը.

Ինչպես արդեն հայտնել էինք՝

1. Ըստ հաստատված 2025-2027թթ. ՄԺԾԾ փաստաթղթով սահմանված ծախսային չափաքանակների՝ դատական համակարգի ընթացիկ ծախսերի 86.2 տոկոսը բաժին է ընկնում աշխատանքի վարձատրությանը, 4 տոկոսը՝ կապի ծառայություններին, 7.8 տոկոսը՝ դատական համակարգի բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ծախսային հոդվածներին (թարգմանչական, համակարգչային, փորձագիտական, շենքերի և շինությունների, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման ծառայությունների ձեռքբերման, գրասենյակային, տրանսպորտային, կենցաղային և հատուկ նպատակային այլ

նյութեր և այլ ծախսեր), 2 տոկոսը՝ պահուստային ֆոնդին:

2. Կապի ծառայությունների գերակշիռ մասը կազմում են փոստային ծառայությունների ձեռքբերման ծախսերը, որոնք 2025-2027թթ. ՄԺԾԾ փաստաթղթի հաստատման ժամանակ կրճատվել են 50 տոկոսով՝ 2025 թվականի բյուջետային հայտի նկատմամբ, ինչը էլեկտրոնային ծանուցումների միասնական հարթակի բացակայության պայմաններում 2025 թվականին կհանգեցնի դատական համակարգի բնականոն գործունեության խաթարմանը, ուստի անհրաժեշտ կլինի փոստային ծառայությունների կրճատված մասը վերականգնել՝ քանի դեռ կառավարության կողմից հանրապետությունում չի ներդրվել փոստային ծառայություններին այլընտրանք հանդիսացող ծանուցումների էլեկտրոնային համակարգ:

3. Դատական համակարգի առջև ծառացած լրջագույն և օրհասական խնդիր է ծառայության գրավչության բարձրացումը, դատական համակարգի որակյալ և փորձառու կադրերով համալրումը, ինչպես նաև կադրերի հոսունության նկատվող աճի զսպումը՝ միայն վերջին 2 տարիների ընթացքում շուրջ 2600 հաստիքակազմի պայմաններում շուրջ 1100 անձ իր դիմումի համաձայն ազատվել է դատական համակարգում իր զբաղեցրած պաշտոնից, որը հետևանք է գերծանրաբեռնված աշխատանքի պայմաններում անհամաչափ ցածր, ոչ մրցունակ վարձատրության: Նման հոսունության պայմաններում չի կիրառվել նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով նախատեսած՝ դատական համակարգի մասնագետ աշխատակիցների հիմնական աշխատավարձի չափը բազային աշխատավարձի ու գործակցի արտադրյալի և դրա առավելագույնը 10 տոկոսը չգերազանցող հանրագումարի չափով սահմանելու վերաբերյալ դրույթ:

Վերոգրյալով պայմանավորված՝ վերջին շրջանում դատական համակարգում պարբերաբար հասունանում են բողոքի ակցիաներ և գործադուլներ, որոնք մինչ այժմ Դատական դեպարտամենտի ղեկավարությանը հաջողվել է զսպել, բացառությամբ սույն թվականի հունիսի 24-ին Վարչական դատարանում արձանագրված գործադուլի, որի պատճառ էր հանդիսացել վարձատրության չնչին նվազումը՝ պարգևատրման ֆոնդի կրճատման հետևանքով:

Ինչպես տեղյակ եք, թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ ատյանի, թե՛ վճռաբեկ ատյանի

բոլոր դատարանները և դատավորները գործում են գերբեռնվածության պայմաններում, և նման պայմաններում, երբ դատավորի կազմից կամ դատարանի աշխատակազմից գեթ մեկ աշխատակից բացակայում է, ապա անհնարին է դառնում վերջիններիս բնականոն գործունեությունը:

Այսպիսի պայմաններում, հաշվի առնելով նաև դատարաններ մուտքագրվող դատական գործերի քանակի տարեցտարի զգալի աճի միտումը, և՛ տեսականորեն, և՛ գործնականում անհնարին է դառնում դատական համակարգում առկա հաստիքների նվազեցման կամ դրանց սոցիալական երաշխիքների նվազեցման դիտարկումը:

Ուշագրավ է, որ Արձանագրության 3-րդ կետի 3-րդ ենթակետի 3.1-ին պարբերության «ա» մասում նախատեսված է բացառություն ուժային և տեսչական մարմինների պահպանման ծախսերի հաստատված ՄԺԾԾ-ի նկատմամբ 4%-ով նվազեցման հարցում, սակայն հատկանշական է, որ առանց դատական համակարգի բնականոն գործունեության ապահովման անհնար է պատկերացնել վերջիններիս բնականոն գործունեությունը, ինչպես նաև դատական համակարգի բնականոն գործունեությունը պետական բյուջե ֆինանսական մուտքերի ապահովման աղբյուր է, որի խաթարման պարագայում պետական բյուջե ֆինանսական մուտքերը ևս կարող են տուժել:

Այսպիսով՝ վերը թվարկված մարտահրավերներին դիմակայելու նպատակով դատական համակարգի որդեգրած քաղաքականությունն է տարեցտարի դատական համակարգի աշխատակիցների սոցիալական երաշխիքների էական բարձրացումը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ կառավարության կողմից հաստատված 2024-2026թթ. ՄԺԾԾ փաստաթղթով սահմանված չափաքանակի համեմատ Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների 2025թ բյուջետային հայտը Ֆինանսների նախարարություն ներկայացվել է արդեն իսկ 2 մլրդ ՀՀ դրամով նվազեցված, իսկ ՀՀ կառավարության կողմից հաստատված 2025-2027թթ. ՄԺԾԾ փաստաթղթով սահմանված չափաքանակը Բարձրագույն դատական խորհրդի և ՀՀ դատարանների 2025թ բյուջետային հայտի նկատմամբ հաստատվել է ևս 758 մլն. ՀՀ դրամով նվազեցված:

Միաժամանակ հայտնում եմ, որ ի տարբերություն պետական այլ գերատեսչությունների և նախարարությունների՝ դատական համակարգի ընդհանուր հաստիքները գրեթե ամբողջությամբ

համալրված են և նման պարագայում էական միջոցներ չեն խնայվում, որով հնարավոր կլինի պարգևատրման տեսքով խրախուսել և մոտիվացնել դատական համակարգում անձնուրաց աշխատող պրոֆեսիոնալներին: Աշխատանքի ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ հաստիքների օրեցօր համալրման պարագայում, նույնիսկ պետական համակարգում ընդունված «13-րդ աշխատավարձի» տեսքով տարեվերջյան պարգևատրումը հնարավոր չի լինի տրամադրել աշխատակիցներին ամբողջ դրույքաչափով: Դատական համակարգի բոլոր աշխատակիցները, բացառությամբ դատավորների և ԲԴԽ անդամների, վարձատրվում են բացառապես հիմնական աշխատավարձի և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածից պաշտոնային դրույքաչափի նկատմամբ մոտ 12% վճարի չափով:

Հատկանշական է նաև, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանվում է, որ Հանրապետության Նախագահի աշխատակազմում, Ազգային ժողովի աշխատակազմում, վարչապետի աշխատակազմում, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը համապատասխանաբար սահմանում են վերջիններիս աշխատակազմի ղեկավարները և թվարկված մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ամսական աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է բազային աշխատավարձի կրկնապատիկի և այդ աշխատողների թվի արտադրյալով: Այս կարգավորման շրջանակներում ևս դատական իշխանությունը ներառված չէ, և դատական համակարգում նվազագույն վարձատրությամբ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պարգևատրումները էական ծանրաբեռնվածություն են առաջացնում ընդհանուր պարգևատրման ֆոնդի վրա, և ազդեցություն են ունենում համակարգի մնացյալ աշխատակիցների սոցիալական երաշխիքների վրա:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն պետական այլ գերատեսչությունների և նախարարությունների՝ դատական համակարգին հատկացված չեն նաև պարգևատրման այլ ֆոնդեր, որով հնարավոր կլինի ամենամսյա պարգևատրել Դատական դեպարտամենտի ղեկավար

կազմին (Դատական դեպարտամենտի ղեկավար, ղեկավարի տեղակալներ), որոնք ի տարբերություն պետական այլ գերատեսչությունների և նախարարությունների ղեկավարների, մասնավորապես՝ նախարարներ, նախարարի տեղակալներ, գլխավոր քարտուղարներ, կատարելով ոչ պակաս աշխատանք՝ համանման գործառույթներ, վարձատրվում են բացառապես հիմնական աշխատավարձի և «պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածից պաշտոնային դրույքաչափի նկատմամբ մոտ 12% վճարի չափով (Դատական դեպարտամենտի ղեկավարի պարտականությունները կատարողի ամսական ընդհանուր վարձատրությունը կազմում է մոտ 480.000 դրամ):

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ դատական համակարգի տարեկան բյուջեի ընթացիկ ծախսերի գերակշիռ մասը կազմում են աշխատանքի վարձատրության գծով ծախսերը՝ առաջարկվող բյուջետային ծախսերի անգամ 4%-ով նվազեցման սցենարը կհանգեցնի դատական համակարգի բնականոն գործունեության խաթարմանը, քանի որ այն ուղղակի ազդեցություն է ունենալու դատական համակարգի աշխատակիցների սոցիալական երաշխիքների վրա:

Ամփոփելով վերոշարադրյալը, հայտնում եմ, որ դատական համակարգը օրենսդրական և այլ հարթակներում լուծումներ չի գտնում բյուջետային ծախսերի՝ ընթացիկ ծախսերի նվազեցման համար, միևնույն ժամանակ, հայտնում եմ, որ եթե Կառավարության կողմից կլինեն բյուջետային միջոցները նվազեցնելու վերաբերյալ համապատասխան առաջարկություններ, Դատական դեպարտամենտը պատրաստակամ է մասնակցել աշխատանքային քննարկումների՝ վերոնշյալ սցենարի կազմման այնպիսի լուծումներ գտնելու նպատակով, որոնք համատեղ քննարկումների արդյունքում երկուստեք ընդունելի կլինեն և չեն խաթարի դատական համակարգի բնականոն գործունեությունը:

Դեռևս սույն թվականի օգոստոսի 28-ի Ձեր համաբովանդակ գրությանն ի պատասխան ներկայացվել է դատական համակարգի ՄԺԾԾ-ով հաստատված բյուջեի նվազեցման անհնարինության մասին հիմնավորումներ և արվել է առաջարկ Դատական դեպարտամենտի հետ կազմակերպել քննարկումներ, սակայն մինչ այժմ որևէ աշխատանքային քննարկում չի նախաձեռնվել դատական իշխանության ներկայացուցիչների ներգրավմամբ, որտեղ դատական

իշխանությունը հնարավորություն կունենար բարձրաձայնել դատական համակարգում առկա ֆինանսական խնդիրների վերաբերյալ:

*Հարգանքով՝*

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ.՝ ֆինանսաբյուջետային վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511790, 511789